



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունվարի 2017թ.

N 3 -Ս

ք.Ստեփանակերտ

ՎԵՐԱՀՄԿԻՉ-ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 2-րդ մասին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2015 թվականի հունվարի 28-ի «Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության գործունեության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 30-ի թիվ 35/132 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N18-Ն որոշմանը համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանրաքվեի հանձնաժողովներին տրամադրված միջոցների օգտագործման, քարոզչության հիմնադրամներ կատարվող մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն:

2. 2017 թվականի հունվարի 20-ից վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար նշանակել Գարրի Յուրիի Միրզոյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ